

Հաստատում են՝  
Ավանդական բժշկության  
համալսարանի  
ռեկտոր՝ Ս. Խ. Մարիբեկյան



20/11 թ.

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆԻ

#### I. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Ամբիոնը համալսարանի մասնագիտական ընդհանրություն ունեցող պրոֆեսորադասախոսական կազմը միավորող ուսումնագիտական ստորաբաժանում է, որը կազմակերպում և իրականացնում է ուսումնամեթոդական և ուսումնագիտական գործընթաց, գիտահետազոտական աշխատանքներ, մասնակցում է գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը, նպաստում որակավորման բարձրացմանը, դաստիարակչական աշխատանքներ տանում ուսանողության շրջանում:

#### II. Ամբիոնի կառուցվածքը

- 2.1 Ամբիոնը կարող է ընդգրկել լսարաններ, մասնագիտական կաբինետներ և լաբորատորիաներ:
- 2.2 Ամբիոնները կարող են լինել հումանիտար, նախամասնագիտական և մասնագիտական առարկաների: Ամբիոնը ստեղծվում է ռեկտորի առաջարկությամբ՝ համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ՝ ելնելով ուսումնագիտական գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակահարմարությունից:

#### III. Ամբիոնի ուսումնամեթոդական և գիտական գործունեության կազմակերպումը

Ամբիոնները պարտավոր են՝

- 3.1 Պատշաճ մակարդակով կազմակերպել և անցկացնել դասախոսություններ, սեմինար, գործնական և լաբորատոր պարապմունքներ, անհատական պարապմունքներ, ստուգողական աշխատանքներ, միջանկյալ և ամփոփիչ սուգարքների և քննությունների անցկացումը:

- 3.2 Ամբիոնն իրականացնում է ամբիոնում դասավանդվող առարկաների գծով ուսումնական ծրագրերի պատրաստում, կազմակերպում է դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական ցուցումների և օժանդակ այլ նյութերի պատրաստումը:
- 3.3 Ապահովում է գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումն ու իրականացումը, կազմակերպում է դասախոսների անհատական ուսումնական պլանների քննարկումն ու հաստատումը, կազմակերպում է դասալսումներ, տարածում դասախոսների գիտահետազոտական հաջողությունները, օգնում սկսնակ դասախոսներին, պայմաններ ստեղծում ամբիոնի դասախոսների որակավորման բարձրացման համար:
- 3.4 Իրականացնում է ուսումնական պլանների թնրմացումը, նոր ուսումնական պլանների մշակումը և քննարկումը, դրանց համապատասխան՝ առարկայական ծրագրերի կազմումը:
- 3.5 Կազմակերպում է ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաները, ղեկավարում և վերահսկում դրանց ընթացքը, ամփոփում արդյունքները և հանդես գալիս հաշվետվություններով:
- 3.6 Առաջադրում է ավարտական քննությունների քննական հանձնաժողովների նախագահների և անդամների թեկնածությունները և ներկայացնում դրանք ռեկտորի հաստատմանը:
- 3.7 Ամբիոնի վարիչները և լաբորանտները պարտավոր են ժամանակին և պատշաճ մակարդակով իրականացնել ամբիոնների աշխատանքների գրագրությունը, աշխատանքների բոլոր բնագավառների վերաբերյալ ունենալ փաստաթղթային ձևակերպումներ և գրանցումներ:
- 3.8 Ամբիոնը առաջնորդվելով մասնագիտությունների կրթական չափորոշիչների պահանջներով համակարգում և վերահսկում է առարկայական ծրագրերի մշակումը և ապահովում դրանց պատշաճ դասավանդումը:

#### IV. Ամբիոնի իրավասությունը

- 4.1 Ամբիոնի գործունեության սկզբունքները, իրավունքները և պարտականությունները սահմանվում և կարգավորվում են համալսարանի և սույն կանոնադրությամբ, որոնք արտացոլում են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների պահանջները:
- 4.2 Ամբիոնը մշակում է ամբիոնի աշխատողների հաստիքացուցակը՝ ելնելով կատարվող մանկավարժական, գիտական և ուսումնաօժանդակ աշխատանքների ծավալից և ձևերից՝ ըստ սահմանված չափանիշների:
- 4.3 Ամբիոնը պարտավոր է.
- կազմակերպել և անցկացնել ուսումնական պլանով նախատեսված դասախոսությունները, սեմինար /գործնական/ և լաբորատոր պարապմունքները, ուսանողների անհատական աշխատանքները, միջանկյալ և ամփոփիչ ստուգարքներն ու քննությունները,
  - գործող ուսումնական պլանին համապատասխան իրականացնել ամբիոնի դասընթացների ուսումնական ծրագրերի պատրաստումն ու նորացումը,

- կազմակերպել դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական ցուցումների և այլ ուսումնասօժանողակ նյութերի պատրաստումը,
- իրականացնել գիտահետազոտական աշխատանքներ, կազմակերպել ավարտված աշխատանքների քննարկումն ու երաշխավորումը հրատարակության,
- քննարկել և հաստատել ամբիոնի դասախոսների անհատական պլանները /օրացուցային պլան/,
- կազմակերպել դասալսումներ և դրանց քննարկումներ,
- կազմակերպել ամբիոնի անդամների ատենախոսությունների քննարկումն ու պաշտպանության երաշխավորումը, ինչպես նաև դրսից ստացված ատենախոսությունների, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և մեծագործությունների քննարկումը,
- ամբիոնի աշխատակազմի նորմալ գործունեության համար ապահովել անհրաժեշտ պայմաններ:

## V. Ամբիոնի կառավարումը

5.1 Ամբիոնի կառավարումն իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման զուգակցման սկզբունքով: Ամբիոնն ամիսն առնվազն մեկ անգամ հրավիրում է ամբիոնի նիստ, որը ղեկավարում է ամբիոնի վարիչը: Ամբիոնի վարիչը նշանակվում է համալսարանի ռեկտորի կողմից տրված հրամանով, որի հիման վրա կազմվում է աշխատանքային պայմանագիր:

Ամբիոնի վարիչը կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի ուսումնագիտական և այլ աշխատանքները, ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետի, համալսարանի մյուս ստորաբաժանումների, ինչպես նաև ուրիշ կազմակերպությունների հետ հարաբերություններում:

5.2 Ամբիոնի վարիչը՝

- հաշվետու է գիտական խորհրդին, ռեկտորատին, ղեկանին, ուսումնական մասին, ամբիոնի կոլեկտիվին,
- ներկայացնում է ամբիոնը բուհում և նրանից դուրս,
- նախագահում է ամբիոնի նիստերը,
- ի պաշտոնե հանդիսանում է համալսարանի գիտական խորհրդի անդամ,
- իրականացնում է ամբիոնի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածության և ամբիոնի աշխատողների պարտականությունների բաշխումը, վերահսկում է դրանց կատարման ժամկետն ու որակը,
- հաստատված կրթական չափորոշիչներին համապատասխան կազմակերպում է ուսումնական գործընթացը, պլանավորում և ղեկավարում է ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքները, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների կազմումը,
- կատարում է ամբիոնի դասախոսների դասալսումներ և կազմակերպում դրանց քննարկումն ամբիոնի նիստում,

- ամբիոնի նիստին առաջարկություններ է ներկայացնում՝ ամբիոնի պրոֆեսորադասախոսական թափուր տեղերի պաշտոնակալման, պաշտոնեական առաջխաղացման, հատուկ տարակարգեր զբաղեցնելու, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի վերակնքման վերաբերյալ,
- համալսարանի ռեկտորի /պրոռեկտորի/ հաստատմանն է ներկայացնում ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և կազմակերպչական աշխատանքների տարեկան պլանը, ինչպես նաև կազմակերպում է դրա կատարողականի քննարկումն ու ներկայացնում տարեկան հաշվետվություն,
- մասնակցում է գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը, ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացումն ու վերաորակավորումը,
- իրականացնում է վերահսկողություն և կրում պատասխանատվություն ամբիոնում ուսումնական, մեթոդական, գիտահետազոտական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման որակի, ներքին կարգուկանոնի և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանման համար,
- նախաձեռնում է ամբիոնի աշխատակիցների պարգևատրումն ու խրախուսումը, միջնորդում վերադաս մարմինների առջև՝ ամբիոնի աշխատակիցներին կարգապահական տույժերի ենթարկելու համար:

## VI. Ամբիոնի կազմը

- 6.1 Ամբիոնի կազմում ընդգրկվում են պրոֆեսորներ, դոցենտներ, ասիստենտներ ու դասախոսներ, ինչպես նաև ուսումնաօժանդակ անձնակազմ:
- 6.2 Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, ինչպես նաև ամբիոնի անդամների և համալսարանի միջև աշխատանքային հարաբերություններն իրականացվում և կարգավորվում են պայմանագրային հիմունքներով:
- 6.3 Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի յուրաքանչյուր անդամ պարտավոր է.
  - պատշաճ մակարդակով կատարել իր մասնագիտությանը համապատասխան ուսումնական, գիտական և մեթոդական աշխատանքներ,
  - կատարել իր անհատական պլանին համապատասխան գիտական հետազոտություններ,
  - կատարելագործել տեսական գիտելիքները, գործնական փորձը, ուսումնական աշխատանքների մեթոդները, մանկավարժի վարպետությունը, մասնակցել գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը,
  - ղեկավարել ուսանողների անհատական գիտահետազոտական աշխատանքները:
- 6.4 Ամբիոնի ուսումնաօժանդակ անձնակազմը, լաբորատորիաների աշխատողները և ծառայողները պարտավոր են.
  - ժամանակին և որակով կատարել հանձնարարված աշխատանքները,
  - մասնակցել ուսումնագիտական նյութերի նախապատրաստմանը, միջանկյալ և ամփոփիչ ստուգաթղթերի և քննությունների հարցաշարերը, անհատական աշխատանքների

թեմատիկան ուսանողներին ժամանակին և սահմանված կարգով տրամադրմանը, գրականության ցանկերի կազմմանը,

- լսարաններում, աշխատասենյակներում և լաբորատորիաներում պահպանել կարգ ու կանոն, աշխատատեղը, սարքավորումներն ու հարմարանքները սարքին վիճակում հանձնել վոխարինող աշխատողին,
- միջոցներ ձեռնարկել անհապաղ վերացնելու աշխատանքների նորմալ ընթացքը խոչընդոտող կամ դժվարացնող պատճառները, դրանք վերացնելու հնարավորության բացակայության դեպքում կատարվածի մասին անհապաղ տեղյակ պահել ամբիոնի ղեկավարությանը,
- պահպանել համապատասխան հրահանգներով նախատեսված աշխատանքի պաշտպանության, տեխնիկայի, լաբորատոր փորձերի անվտանգության, սանիտարական, ինչպես նաև հակահրդեհային կանոնների պահանջները:

6.5 Ամբիոնի ողջ անձնակազմը պարտավոր է իր գիտամանկավարժական, աշխատանքային գործունեությունն իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրության, համալսարանի, ամբիոնի կանոնադրությունների, ինչպես նաև համալսարանի ներքին կարգապահական կանոնների պահանջներին համապատասխան:

## VII. Ամբիոնի ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը

7.1 Ամբիոնի ստեղծումը, վերակազմակերպումը /միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում/ և լուծարումը կատարվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ: